տաղի հեղեղատի պէս, ոչնչացնում է բոլոր հանդիպածը, բայց երբ կրկին ցամաքում է գետինը եւ հողը ետ է ստանում իր ուժը, այն ժամանակ կրկին բուսեցնում է բոլոր սերմերը, որ դրած էին նրա արգանդի մէջ:

Մէկը խորամանկ հարստահարող է, միւսը մեծասիրտ աւազակ: Իսկ երկու դէպքումն եւս տանջւում է, սպառւում է անբախտ գիւղացու կեանքը...

Կարօն բացատրում էր ինձ այս բոլորը, ասում էր՝ թէ գիւղացու վիճակը կարող է աւելի բարւոք լինել, եթէ հասարակութիւնը ուրիշ ձեւով կազմակերպած կը լինի: Նա ասում էր, թէ այն ժամանակ չարութիւն չի լինի, բոլոր մարդիկը բարի կը լինեն, ամէնի ապրուստը ապահոված կը լինի. — աղանեռի դարը կանցնէ, կտիրէ միայն արդարութիւնը եւ իրաւունքը: Նա երկար ու երկար մեկնում էր, թէ ինչ ձեւով պէտք է հասարակութիւնը կազմակերպել, որ զօրեղն անզօրին չճնշէ, որ մշակ մարդու աշխատութեան վաստակը չխլեն եւ նա միշտ իր տանը ուտելու հաց ունենայ, եւ ամէնի վրայ տիրէ հաւասարութիւնը...

Կարօն ուրիշ շատ բաներ ասում էր ինձ, բայց ես յիմար էի, շատ յիմար, նրա խօսքերը իմ գլխումը չէին մտնում, ես ոչինչ չէի հասկանում եւ սկսում էի նրա մտքերի դէմ հակառակել: Ես միայն ասում էի այս բոլորը աստուծոյ կամքովն է լինում. մարդը չէ կարող իր տիրոջ կամքին հակառակել. եթէ աստուած ուզենայ, ինքը ժողովրդին հանգստութիւն կուղարկէ, ինքը կուղղէ նրա ճանապարհը: Երեւի աստուած չէ կամենում, որ ժողովուրդը իր անբախտ դրութիւնից դուրս գայ, որովհետեւ այս նրա պատիժն է:

Կարօն շատ էր տխրում, երբ ես այսպիսի մտքէր էի յայտնում: Բայց ես յետոյ հասկացայ, որ նա իր դատողութիւնների մէջ ուղիղ էր: Հասկացայ, բայց խիստ ուշ...

ԻԷ. ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԷՐԸ

Բայց ի՞նչ էր, որ կապում էր հայերին մի այնպիսի երկրի հետ, ուր նրա կեանքը հանապազօրեայ վտանգի մէջ էր, ուր նրա կայքը ապահոված չէր, ուր նրա ապրուստը խառն էր արեան ու քրտինքի մէջ, ուր նրա ընտանեկան սրբութիւնը արատաւորւում էր, ուր նրա կրօնքը եւ ամէն ինչ, որ նոիրական էր նրա համար, սրբապղծւում էր: Ի՞նչ էր, որ կապում էր հայերին այսպիսի երկրի հետ. — Հայրենիքի սէրը:

Հայրենիքը լի էր անթիւ յիշատակարաններով, որոնք ասում էին հային՝ «դայ քո երկիրն է, այստեղ էին ապրում քո նախնիքը, եւ այստեղ մեռան